



Հոգեկան առողջության հաստատության նպատակի փոփոխություն և ապաքինմանն ուղղված խնամք

Որո՞նք են ապաքինմանն ուղղված ներտնային և
համայնքում գործող հոգեկան
առողջության ծառայությունները

Ապաքինմանն ուղղված ներտնային և համայնքում գործող հոգեկան
առողջության ծառայություններն օժանդակություն են տրամադրում
անհատական կարիքներին համապատասխանող՝ պակաս
սահմանափակող և առավել ամբողջական միջավայրում:

Դա նշանակում է, որ հաշմանդամը կարող է հնարավորինս լիարժեք շփվել
հաշմանդամություն չունեցող մարդկանց հետ: Նրան հասանելի են
կենսագործունեության այն պայմաններն ու միջավայրը, որտեղ ապրում են
հաշմանդամություն չունեցող մարդիկ: Մատուցվում են անհատական
նպատակներին հասնելուն միտված ծառայություններ:

Ապաքինմանն ուղղված հոգեկան առողջության ծառայությունների
փիլիսոփայությունը, սկզբունքներն ու պրակտիկան ընդունվել են

Կալիֆորնիա նահանգի կողմից: «Ապաքինումն» ըստ այս մոդելի դիտվում է որպես առողջանալու և ձևափոխվելու ճանապարհորդություն, որը հնարավորություն է տալիս հոգեկան առողջության դժվարություններ ունեցող անձին իրականացնել իր ամբողջ ներուժը՝ ապրելով պակաս սահմանափակող և առավել ամբողջական միջավայրում: ¹

Որո՞նք են ապաքինման մոդելի հիմնական բաղադրիչները

- a. Հույս՝ հաճախորդի կողմից պահպանվող և այլոց կողմից ներշնչվող
- b. Անհատական կարողությունների ընդլայնում՝ ինքն իրեն պաշտպանելու հնարավորություն
- c. Հարգանք՝ հաճախորդի ինքնասիրությունն ու այլոց կողմից հարգանքը
- d. Սոցիալական կապերը՝ ընտանիքի և ընկերների կողմից տրամադրվող օժանդակության համակարգ
- e. Պատասխանատվության զգացում՝ հաճախորդները պատասխանատվություն են ստանձնում իրենց որոշումների և գործողությունների համար

Որո՞նք են ապաքինման մոդելի անհրաժեշտ բաղադրիչները

- a. Անհատականացված ծառայությունների մատուցում
- b. Գործընկերների աջակցություն
- c. Ինքնակատարելագործում կամ ինքնասպասարկում
- d. Մշակութային և լեզվական տեսանկյունից պատշաճ ծառայություններ

¹ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5600.1, 5806(c)(1)-(10) & (d):

- e. Պակաս սահմանափակող և առավել ամբողջական միջավայրում ապրելը

Պարտավոր՝ ր է արդյոք հոգեկան առողջության հաստատությունը նախատեսել ապաքինմանն ուղղված համայնքային ծառայությունները որպես ընդունման այլընտրանք

Այո: Ապաքինմանն ուղղված ներտնային և համայնքում գործող հոգեկան առողջության ծառայությունների մատուցումը պահանջվում է նահանգային և դաշնային օրենսդրությամբ՝² նվազեցնելու համար այն ամոթանքն ու խտրականությունը, որը կապված է հաստատություններում խնամք ստանալու հետ: Իրականության մեջ սակայն հաճախորդներին միշտ չէ, որ այլընտրանքային ծառայությունների դիմելու ուղեգրեր են տրամադրում: Այդ իսկ պատճառով հաճախորդներին պետք է տրամադրվեն հոգեկան առողջության ծառայություններ մատուցողներ, որոնք կարող են նպաստել ապաքինմանը պակաս սահմանափակող և առավել ամբողջական միջավայրում:

Ի՞նչ պետք է ձեռնարկի հոգեկան առողջության բուժման հաստատությունը

Մարդկանց հոգեկան առողջության հարկադիր բուժման համար իր տարածքում կալանքի տակ պահելու համար նախատեսված հոգեկան առողջության բուժման հաստատությունը պետք է որոշի, թե անհատի կարիքներն ինչպես պետք է բավարարվեն հաստատության տարածքից դուրս: Դա ներառում է անհատի կարիքները պատշաճ կերպով բավարարելու հնարավորություն ունեցող ապաքինմանն ուղղված

²Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին (ADA) օրենքով և Օլմսթեդի գործով դատարանի որոշմամբ (Olmstead Decision) նախատեսվող ինտեգրման հանձնազիր» տեղեկատվական ամփոփագիրը:

ներտնային և համայնքում գործող հոգեկան առողջության առկա ծառայությունների գնահատումը:

Լանթերմանի-Փետրիսի-Շորթի (LPS) օրենքով նախատեսվում է, որ Բարեկեցության և հաստատությունների կանոնագրքի 5150-րդ բաժնի պահանջների համաձայն կալանավորման ենթակա անձը պետք է ենթարկվի գնահատման՝ որոշելու, արդյոք նրան «հնարավոր է պատշաճ եղանակով ծառայություններ մատուցել՝ առանց կալանավորման»: . . . Եթե դա հնարավոր է, ապա «Նման անձանց *պետք է ենթարկել գնահատման, ճգնաժամային միջամտության կամ մատուցել ստացիոնար կամ *ամբուլատոր* ծառայություններ՝ *կամավոր* սկզբունքով»:³*

Բացի այդ, ըստ LPS օրենքի պահանջների, Բարեկեցության և հաստատությունների կանոնագրքի 5250-րդ բաժնի համաձայն 14-օրյա կալանքի ենթարկելու համար «անձը պետք է լինի կամավոր սկզբունքով մատուցվող բուժման մասին տեղեկացված, սակայն նման բուժում ընդունել չկամեցող կամ անկարող»:⁴

Բացի գնահատման, ինչպիսի՞ այլ ծառայություններ պետք է մատուցի հոգեկան առողջության բուժման հաստատությունը

Նահանգային օրենքի համաձայն, «բոլոր անձինք պետք է տեղեկացվեն նախնական խնամքի ծառայությունների հասանելիության մասին, որոնք կարող են կանխել հիվանդանոցային բուժումը կամ հիվանդանոցային բուժմանը հետևող հասարակության մեջ ապրելուն հարմարվելու համար օգնություն տրամադրող հետհիվանդանոցային բուժումը»:⁵

Այս նպատակով անհրաժեշտ է, որպեսզի հոգեկան առողջության բուժման հաստատությունը մատուցի ապաքինմանն ուղղված ներտնային և

³ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5151 (նշումը կատարված է մեր կողմից):

⁴ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5250 (c):

⁵ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5008 (d):

համայնքում գործող հոգեկան առողջության պատշաճ ծառայություններ և՛ որպես ամբուլատոր բուժման, և՛ որպես հետհիվանդանոցային բուժման կամ դուրսգրման պլանավորման մաս:

Ի՞նչ է անհրաժեշտ ձեռնարկել այն դեպքում, եթե անհատը դիմում է նման օգնության

Նման դեպքերում հոգեկան առողջության բուժման հաստատությունը պարտավոր է նման օգնության ուղեգիր տրամադրել կամ դիմել հասարակական կամ մասնավոր պատասխանատու մատակարարներին՝ ուղեգիր տրամադրելու գործում օգնության խնդրանքով: Օրինակ՝ 14-օրյա հավաստիացման ծանուցումը հստակ պահանջում է «այլընտրանքյաին ծառայությունների» ուղեգիր: ⁶ Այն կարող է ներառել, սակայն չի սահմանափակվում, շրջանային հոգեկան առողջության ծառայությունը կամ առողջության ապահովման մասնավոր պլանը:

Արդյո՞ք օրենսդրությունը սահմանում է ուղեգրի տրամադրումը

- Այո: Ուղեգիրը սահմանվում է օրենսդրությամբ և ներառում՝
- Անհատի տեղեկացումը մատչելի ծառայությունների մասին
 - Անհատի անունից հանդիպումները նշանակելը
 - Անհատի հոգեկան առողջության խնդրի քննարկում այն կազմակերպության կամ անհատի հետ, որին նշանակել է անհատը:
 - Ուղեգրերի արդյունքների գնահատում
 - Անհրաժեշտության դեպքում կազմակերպել տեղափոխումը և անհատական ուղեկցումը⁷

Համոզվելու համար, որ հաճախորդը ստանում է անհրաժեշտ օժանդակությունը, շատ կարևոր է նրա հետ անցկացնել լրացուցիչ

⁶Տե՛ս՝ Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5252:

⁷Տե՛ս՝ Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5008 (d):

աշխատանք: Խնամքի մատակարարները կարող են հանդիպումներ նշանակել և ապահովել տրանսպորտային միջոցներ, սակայն անհրաժեշտ է նաև խրախուսել և սատարել հաճախորդի կողմից իր սեփական շահերի պաշտպանությունը, որպեսզի վերջինս կարողանա ձեռք բերել ինքնուրույն օգնության դիմելու համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները:

Ե՞րբ է ուղեգրի տրամադրումը համարվում կատարված

LPS օրենքի համաձայն, «ուղեգիրն ամբողջացված է համարվում այն ժամանակ, երբ գործակալությունը կամ անհատը, որտեղ կամ ում մոտ ուղարկվել է անձնավորությունը, ստանձնում է անհրաժեշտ ծառայությունները մատակարարելու պատասխանատվությունը»:

Ապաքինմանն ուղղված ներտնային և համայնքում գործող հոգեկան առողջության ինչպիսի՞ ծառայություններն են հասանելի նահանգային օրենքի համաձայն

Կալիֆորնիա նահանգն ապահովում է ապաքինմանն ուղղված ներտնային և համայնքում գործող հոգեկան առողջության ծառայություններ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքով (MHSA) և Medi-Cal-ի հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների (Medi-Cal) ծրագրով:

11. MHSA հատուկ ինչպիսի՞ ծառայություններ են հասանելի և ո՞վ է իրավասու օգտվել նման ծառայություններից

MHSA-ի շրջանակներում մատակարարվող ներտնային և համայնքային ծառայությունների ցանկը ներառում է, սակայն չի սահմանափակվում, հետևյալով.

հաճախորդի վրա կենտրոնացած ծառայությունները, որոնց հիմքում ընկած է հոգեբանական վերականգնման ու ապաքինման սկզբունքները⁸

- անմիջապես հասանելի, ժամանակավոր և (կամ) մշտական կացարանի տրամադրում:
- Այն ներառում է Օգնության տրամադրմամբ կացարանները, որոնք բնակարան են կամ տուն, որտեղ սակայն անհատների համար հասանելի են օգնության ծառայությունները:⁹
- Գործընկերների աջակցություն՝ օգնություն նման ճանապարհ անցած կամ հոգեկան առողջության համակարգից քաջատեղյակ մարդկանց կողմից¹⁰
- Ամբողջական ծառայությունները մատակարարող գործընկերություն (FSP)՝ անհատին օրը 24 ժամ և շաբաթական յոթ օր սատարող թիմ, ներառյալ ճգնաժամային աջակցության ծառայությունները¹¹

Շրջանները նախապատվություն են տալիս նախկինում նման հաստատությունների կողմից բուժում չստացած անձանց, որոնք կարող են ունենալ «հոգեկան լուրջ հիվանդություն և (կամ) հուզական լուրջ խանգարում» և որոնց հոգեկան առողջության ծառայություններ չեն մատուցվում կամ մատուցվում են միայն անհապաղ կամ ճգնաժամային ծառայություններ:¹²

MHSA-ի միջոցները հասանելի են՝ մատակարարելու այն ծառայությունները, որոնք չեն ծածկվում դաշնային հովանավորությամբ

⁸ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5806 (a)(6):

⁹ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5806(a)(2)և(10): *Տե՛ս նաև* Բաժին 9, Կալիֆորնիայի կանոնագիրք, § 3615(a)(4) [․MHSA կացարանների տրամադրման ծրագիր]:

¹⁰ *Տե՛ս* և հաստատությունների կանոնագիրք, §§ 5806 (a)(5):

¹¹ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 5806 (b), բաժին 9, Կալիֆորնիայի կանոնագիրք, §§ 3615, 3620.

¹² *Տե՛ս* Կալիֆորնիայի կանոնագիրք, §§ 3620(d) և 3200.310

գործող ծրագրերով¹³ կամ անհատների ու ընտանիքների ունեցած ապահովագրական ծրագրերով:¹⁴

Հոգեկան առողջության Medi-Cal հատուկ ինչպիսի՞^o ծառայություններ են հասանելի և ո՞վ է իրավասու ստանալ նման օգնություն

Medi-Cal-ի հոգեկան առողջության ծառայությունները ներառում են Գործերի նպատակային կառավարումը, որը ներառում է կացարանի, օժանդակության և աշխատանքի տրամադրումը: Medi-Cal-ի հոգեկան առողջության ծառայությունները ներառում են Վերականգնողական ընտրանքի ծառայությունները, ինչպիսին են՝

- Հոգեկան առողջության ծառայությունները (խորհրդատվություն, գնահատում, ծառայության ծրագրի մշակում)
- Վերականգնում (անհատականացված օգնություն և ապաքինման նպատակներ)
- Ճգնաժամային միջամտության ծառայություններ (ներառյալ ներտնային)
- Ճգնաժամի կայունացման ծառայություններ
- Ճգնաժամի ծառայություններ՝ բնակարանային պայմաններում
- Անցումային բնակության ծրագրեր (մինչև 18 ամիս տևողությամբ)
- Դեղամիջոցների տրամադրման աջակցության ծառայությունները (ներառյալ տեղեկացված համաձայնությունը և ծրագրի մշակումը)

Այս օգնությունը կարող է տրամադրվել բնակարանային և համայնքային միջառք պայմաններում, ներառյալ տունը, դպրոցը և համայնքում գտնվող

¹³Նման ծրագրերից է Medi-Cal-ը, որը կքննարկվի ստորև:

¹⁴*Տե՛ս* առաջարկություն 63, Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենք, § 3(d) [Նպատակ և մտադրություն]: Մասնավոր ապահովադիրների կողմից հոգեկան առողջության ծառայությունների ծածկույթի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար տե՛ս նաև Կալիֆոռնիայի հոգեկան առողջության հավասարության մասին օրենքի տեղեկատվական ամփոփագիրը:

վայրերը՝ «հոգեկան անկարողության առավելագույն նվազեցման և օգնություն ստացողի գործունեության հնարավորինս բարձր մակարդակի վերականգնման նպատակով»:¹⁵

Շրջանի Medi-Cal-ի հոգեկան առողջության ծրագրերը (MHPs) պետք է ծառայություններ մատուցեն Medi-Cal-ից օգտվելու իրավունքն ունեցող անձանց, որոնք համար այս ծառայությունները, ըստ նահանգային օրենքների, «բժշկական տեսակետից անհրաժեշտ են»:¹⁶ Դաշնային հավելյալ ապահովության եկամուտ (SSI) ստանալու իրավունք ունեցող անձինք ինքնաբերաբար ունեն Medi-Cal-ից օգտվելու իրավունք. Շրջանի հոգևորական առողջության ծառայությունների տեղեկատուին կարող են ծանոթանալ՝ օգտագործելով հետևյալ հղումը՝ <http://www.dmh.ca.gov/docs/CMHDA.pdf> :

13. Կա՞ն արդյոք մարդկանց տանը և համայնքում օժանդակություն տրամադրող այլ ծրագրեր

Այո: Կան մի շարք ծառայություններ, որոնք հասանելի են դաշնային, նահանգային և (կամ) շրջանի կողմից ֆինանսավորմամբ և որոնց մասնակցությունը կատարվում է կամավոր սկզբունքով, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, հետևյալով՝

- Կացարան տրամադրելու ծրագրեր
- Գործընկերների և սեփական շահերի պաշտպանության ծրագրեր
- Գործերի կառավարման ծառայություններ

¹⁵Տե՛ս Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնագիրք, §§ 14021.4 (a)(3)և(4):

¹⁶Տե՛ս բաժին 9, Կալիֆորնիայի կանոնագիրք, §§ 1830.205, 1830.210

- Շրջանի սոցիալական ծառայություններ, ներառյալ ներտնային աջակցության ծառայությունները
- Նյութերի չարաշահման ծառայություններ
- Կրթական ծառայություններ
- Մասնագիտական ծառայություններ
- Տրանսպորտային ծառայություններ
- Իրավական ծառայություններ

Այս ծրագրերին մասնակցելու կամ ծառայությունների օգտվելու համար կան հստակ չափանիշներ, որոնցից պետք է տեղյակ լինի հիվանդանոցների անձնակազմը: LPS օրենքի համաձայն, «գնահատման ծառայություններ մատակարարող յուրաքանչյուր գործակալություն կամ հիմնարկություն պետք է վարի ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր համայնքային բոլոր ծառայությունների ընդգրկուն ցանկ: Այս գրառումները պետք է ներառեն ուղեգրեր ընդունող գործակալությունների կամ անհատների հետ կնքված գործող պայմանագրերը, ինչպես նաև անցյալում տրված ուղեգրերի գնահատականները»:¹⁷

14. Գործու՞մ են արդյոք նպատակի փոփոխության և ապաքինմանն ուղղված խնամքի հետ կապված օգնություն տրամադրող փաստաբաններ

Այո: Ներտնային և համայնքային ընտրանքների դեպքում օգնություն տրամադրող փաստաբանների կազմում ընդգրկված են, սակայն չեն սահմանափակվում՝

- Հիվանդների իրավունքների շրջանի փաստաբաններին դիմելու համար այցելեք <http://www.disabilityrightsca.org/OPR/pradirectory.pdf>
- «Հաշմանդամների իրավունք՝ Կալիֆորնիա» (Disability Rights California) կազմակերպությանը դիմելու համար զանգահարեք 1-800-776-5746 կամ այցելեք <http://www.disabilityrightsca.org>

¹⁷ *Տե՛ս* Սոցիալական ապահովության և հաստատությունների կանոնադիրք, §§ 5008 (d):

- «NAMI ՝ Կալիֆորնիա» (NAMI California) կազմակերպությանը դիմելու համար զանգահարեք 916-567-776-5746 կամ այցելեք <http://www.namicalifornia.org/>

Մեզ կարևոր է ձեր կարծիքը: Տեղեկատվական այս ամփոփագրին ծանոթանալուց հետո խնդրում ենք լրացնել այս հակիրճ հարցումը և նշել ձեր կարծիքը:

Անգլերեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

Ամերիկայի, խտրականության, ստորագման և խտրականության նվազեցման քաղաքականության առաջ մղելու ծրագրի (APEDP) ֆինանսավորումը տրամադրվում է ընտրողների կողմից հավանության արժանացրած Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքի (63-րդ առաջարկության) համաձայն: Ծրագիրն իրականացվում է Կալիֆորնիայի հոգեկան առողջության ծառայությունների վարչության (CalMHSA) կողմից: Շրջանի MHSA հիմնադրամներն աջակցություն են տրամադրում CalMHSA-ին, որն իրենց ներկայացնում է անհատների, ընտանիքների և համայնքների համար հոգեկան առողջության արդյունքների բարելավման ուղղությամբ աշխատող շրջանային կառավարությունների կազմակերպություն: CalMHSA իրականացնում է ծառայությունների և կրթական ծրագրերի կառավարում նահանգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք <http://www.calmhsa.org> կայքը:

